

« Գրեալ ձեռամբ Ստեփանոսի քահանայի և քերականի ի Սինեայ աշխարհ »
« հէն, ի փառս և ի պատիւ անմահին »
« Աստուծոյ Հօր, Ամէն » :

Նոյն Ղևտական խմբագրութեան այլ երկու պակասաւոր օրինակութիւններ ունինք ի հին գաղափարէ, գրուած Հայոց 430 թուականին, այն է 981, որոնք նոյնպէս յառաջ կը բերեն այս կտորները յանուն Եւսեբիոսի, օրինակութեան չնչին տարբերութեամբ, այսպէս (Բ) օրինակին մէջ փոխանակ « փխրեցէ ձեռօք » « փըրխրեցէ ձեռօք » կը դնէ. ինչպէս նաև (Զ) մասին մէջ « և յոմանց վասն ժախատեալութեան » բացատրութիւնը կը յաւելու, և այլն :

Այս ընդօրինակութեան նախագաղափարը իր վերջին մասերուն մէջ բոլորովին 10 թուղթի չափ եղծեալ ըլլալով, ինչպէս նաև մէջերն ալ պակասաւոր, օրինակողը (Հ. Եփրեմ Սեթեան յԱրալցիս 1836) ցաւ կը յայտնէ որ չէ կրցած կարգաւ իր հետ մենք ալ : Անոր համար վերջին Յիշատակարանը կը պակաս :

Ինչ որ ալ ըլլայ՝ այս և մեր կատարեալ բնագիր օրինակը՝ մեզ բոլորովին կը համոզեն, թէ այդ Զ դարուն թարգմանուած շղթաները իրենց Յունարէն բնագրին մէջ այս Ս. կիրդի անուամբ եկած մեկնութիւնը ոչ թէ կիրդի կու տային, այլ Եւսեբիոսի Եմեսացոց եպիսկոպոսին :

Ինձ կը թուի թէ Ս. կիրդի վերագրուելուն պատճառը թերեւս օրինակողի մը անզգոյշ սխալն ըլլայ՝ և կամ որովհետեւ Եւսեբիոս Մակեդոնեան աղանդին կողմ անցած էր՝ թերեւս իւր գրութիւններն ոչնչացումէն փրկելու համար Ս. Հօր մը անուամբ կնքած ըլլան. ինչպէս սովորական էր հիներու ըրով :

Ղևտական մեկնութիւնը ոչ միայն հայկական՝ այլ և Եւրոպական մատենագրութեան մէջ հատուկօր մուտիւ Եւսեբիոսի անուամբ. ինչպէս նաև միւս մասերէն ալ բաական կտորներ կան զանազան շղթաներու մէջ. ասոնց և Եւսեբիոսի կենաց և գրուածոց վրայ կը խօսինք յաջորդով :

Հոս այսչափ միայն ըսենք, որ Եւրոպացիք բոլորովին կորսուած կը համարին Եւսեբիոսի գրութիւնները՝ անուանելով զանոնք քեղուն և ընտիր մեկնութիւններ :

Հ. ՎԱՆԱՆ ԳՈՎԱՆԱՆԻՍԻԱՆ

Շարունակելի

ՄՈՒՋԱՆԻ ԶԱՅՐՄԱՅԱ ԳԱՆԱՐԸ

(Ալէքսանդր - Պոլսոյն Կոստանդնուպոլսոյն)

(Շարունակութիւն տես Բազմ. էջ 324)

Բնկերութիւններ. — Չահարմահալի հայ գիւղացիութեան շրջապատող թանձր խաւարի մէջ մխիթարական երևոյթ կարելի է համարել գոյութիւն ունեցող բարեգործական ընկերութիւնները, որոնք կազմել են ժամանակի ընթացքում, զանազան ծրագիրներով և նպատակներով : 30-50 հոգուց բաղկացած այդ ընկերութիւնները իրենց գործունէութեամբ կարողանում են փութէ շատ շօշափելի օգուտներ տալ : Նրանց գլխաւոր նպատակն է նպատակէլ գաւառի հայ գիւղացիութեան մտաւոր և բարոյական զարգացմանը, և օգնել, իրենց նիւթական կարողութեանց համեմատ, գիւղական դպրոցների և հայ ազգին :

Ամենատառջին ընկերութիւնը հիմնել է Մամուքա հայաբնակ գիւղում, 1902 թիւն, մի քանի գիտակից անհատներ — Օր. Խաչատրուն Էլիագեանի և Պ. Պ. Օհան Մինասեանի, Սիմէօն Գովհաննէս Սիմէօնեանի — նախաձեռնութեամբ, որոնք տեսնելով Նոր-Ջուղայում գոյութիւն ունեցող բարեգործական ընկերութիւնների բարեբար արգեցեցութիւնը՝ ձգտում են իրենց գիւղերում ևս հիմնել նման մի ընկերութիւն, և ահա հիմք են դնում « Օթանդակ Դարաւազօր » ընկերութեան : Սկզբնական շրջանում ընկերութեան անդամները հաւածուում են մի քանի խաւարաւ միտների կողմից, նոյն իսկ « գողեր » են հռչակուում, բայց նրանք չեն յուսահատուում և անվճար կանգ առաջ են տանում իրենց գործունէութիւնը :

Անուհետև հայաբնակ միւս գիւղերի երիտասարդներն էլ ձգտում են ունենալ նմանօրինակ ընկերութիւններ, և ահա, ժամանակի ընթացքում, հիմնուում են մի շարք ընկերութիւններ, որոնցից շատերը յետոյ միանում են Նոր-Ջու-

դայի Հ. Յ. Դաշ. ենթակոմիտէի հետ, իսկ մի քանիսն էլ Նոր-Ջուղայի «Արանց» բարեգործական ընկերութեան մասնաճիւղին են կազմում: Ան այդ ընկերութիւնները. — Մամուռան գիւղում գոյութիւն ունի «Ճանրեր» երիտասարդաց միութիւնը, Լիվաօսանում՝ «Դպատակ» ընկերութիւնը, Ներքին — Քոնարգում՝ «Արաւլայ» ընդհանրական ընկերութիւնը և «Նոր-սնորանց» պատանեկան ընկերութիւնը, Վերին-Քոնարգում՝ «Կայծեր» աղքատախնամ, «Արժի» և «Բերեղասիրաց» միութիւնները, Սիւնազանում՝ «Արանց» բարեգործականը, Աղբուլղում՝ «Արժի» և «Փայլակ» միութիւնները, Մամուրայում՝ «(Ժմեղակ Հ. Յ. Դ. Դարուազմոր», «Չոր-Ալան Արանց», «Աշուտ» և «Հ. Յ. Դ. Արաւլայ» ընկերութիւնները, Հաշիաբաղում՝ Հ. Յ. Դ. Արիւծ» ընկերութիւնը և «Աղբատախնամ» միութիւնը, Սիւրբում՝ Հ. Յ. Դ. Արիւծ» բարեգործական խումբը, Ամադաբաղում՝ «Աղբային խումբ» և գորաուր Հ. Յ. Դ.» ընկերութիւնը:

Այսպէս անա ջահարմահալում գիւղացիներն ունեն մի շարք ընկերութիւններ, որոնք ձգտում են առաջադիմութեան և կրթութեան: Լուսաւորութեան հարցը գիւղացիների համար համարեալ դարձել է հրատապ և ամենակենսական մի խնդիր: Բայց ցաւալին այն է, որ այդ ընկերութիւնների մէջ չկայ սերտ յարաբերութիւն, ներքին ընդհանուր կապ. նրանք գործում են իրարից բոլորովին բաժան-բաժան և շատ անգամ միմեանց են զնասում և քայքայում: Այս տիպուր երևոյթը յատկապէս աչքի է զարկւում այն գիւղերում՝ ուր կան 3 — 4 ընկերութիւններ, որոնք համարեալ թէ ունեն համանման նպատակներ և ծրագրեր: Միակ տարբերութիւնը անունների և վարիչ մարմինների մէջն է: Դրանք սկիզբ են առել սոսկէս. մայր ընկերութեան անդամներից մի քանիքը ամենաչնչին պատճառով բաժանւել են միութիւնից և իրենց շուրջ համախմբելով մի քանի համախոհներ՝ կազմել են մի առանձին կուսակցութիւն և հիմք են դրել մի նոր ընկերութեան: Եւ այսօր նրանք ձգտում են միմեանց ծառան և քայքայել: Դրանից տուժում է ընդհանուր գործը, թէ նրեկապէս և թէ բարոյապէս: Անա այդպիսի ցաւալի երևոյթների առաջն առնելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է ունենալ պատասխանատու և ղեկավարող մի մարմին, կազմած ձեռնառ և կարող ամենից, որոնք գործի գլուխ անցնելով՝ սերտ յարաբերութեան մէջ դնէին բոլոր ընկերութիւններին և ձեռք ձեռքի տաւծ, իբրև մի հոգի և մի սիրտ,

միացած ոյժերով և համերաշխութեամբ առաջ տանէին ջահարմահալի կրթութեան, լուսաւորութեան և այլ գործերը: Ուրախալի է, որ վերջերս կազմւել է այդպիսի մի մարմին Համայնական վարչախորհիւն անունով. մի քանի գիտակից երիտասարդներ — Մանասէր Տէր — Թաղէօսեան, Սիմէօն Մանասէրեան, Արաւլայ Տէր — Յովհաննիսեան, Աստածատուր Սարգսեան, — տեսնելով գաւառի և ընկերութիւնների դառն դրութիւնը՝ համախմբւում և մշակւում են մի ծրագիր, ապա կոչ են անում բոլոր ընկերութիւններին, ազանաներին, քեանաներին և հայ գիւղացիութեան՝ կազմել մի միտքիւն: Անա այդ կոչը.

Դիւղի Արմանապատիւ քահանաներին,
Մեհապատիւ քեաներաներին եւ
Յարգելի հայ հասարակութեան.

Մեծը տեսնելով ու զգալով, որ թէ քաղաք և թէ գաւառը ամեն տեղ տեսալ-տեսալ կարգեր ու կամոմներ կամ, թէ իրիծց պաշտպանութեամ և թէ բոլոր ազգային խնդիրների վերաբերեալ գործերի համար. իւր ձեռքով ունենալով այն համազամբը՝ որ միայն ջահարմահալ է, որ ամենաանձնիկ դրութեամ մէջ է գտնուում, ամենայն մասամբ թող մի փոքր սթափւեմը և իմամանքը թէ մարդկային սերդի մէջ սիմը որ աստիճանի ենք ընկած և ի՞նչ մոդակալի դրութեամ մէջ ենք, Այն ինչ, որ մարդկային մտքերից վեր է և միւր ծնոքը չի հասնի, այն ոչինչ. թող զոմեայ մեր ծնոքի եկածն ամենք. ահա թէ ի՞նչ է ցոյց տալիս մեր ցանկութիւնը.

Մեր մպատակ մայն է, որ կազմել մի միութիւն ամբողջ ջահարմահալում և մոյմ միութիւնը գործի ազգային հարկ եղած ղեպքերում, ի հարկէ իր ոյժերի մերածին չափի և ըստ արժամանաց.

Ա. Դիմումներ ամել այն ժամամալ, երբ մարդիկ մեղ վիժակի մէջ են գտնուում և սովամահ լինում:

Բ. Հոգ տամն եկեղեցական հաշիւներին.

Գ. Աշխատել, որ ջահարմահալի ղարդոցները փակ չմնան.

Դ. Մտածել բժշկի մասին, և այլմ.

Վարիչ մարմինը դեռ վերջնական կերպարանք չէ ստացել. նրա առաջ դեռ շատ դժւարութիւններ և խռչնդոտներ կան, որոնք դէմ նա պէտք է մարգրի անվկանդ եռանդով և տոկունութեամբ, իրագործելու համար իւր վեճ ծրագրերը: Խնայարն և կրթարտութիւն. — Թատրոնի կրթիչ նշանակութեան և նրա կատարած հսկայական դերի մասին գիւղացիները համարեալ թէ

գաղափար չունեն, և այդ է գլխաւոր պատճառը, որ թատրոնը մուսք չի գործել Չահարմահայի բոլոր գիւղերում: Միակ թատրոնաւան մնալ բեմը, որ գոյութիւն ունի ամբողջ գաւառում, դա Վեփին - Գոնարքի «Վլայնան» դպրոցի փոքրիկ սրահում կառուցած ցեխաշէն բեմն է, որ շինւել է 1904 թ.ին, Բագրատ Վարդ. (այժմ եպիսկոպոս) Վարդազարեանի նախաձեռնութեամբ: Դա արտաքուստ և ներքուստ աղքատ մի բեմ է, որ ոչ դէկորացիաներ ունի և ոչ էլ վարպետը: Այդտեղ ամենաառաջին ներկայացումը կազմակերպել են, օր. Խաչիսթեան էլիւզաբեան և պ. պ. Սարգիս Յովհաննիսեան և Աստածատուր ուսուցիչ-ուսիները: Նրանք ներկայացնում են մի քանի փոքրիկ վողբելիներ: Այնուհետեւ երկար ժամանակ լռում է թատրոնը, մինչև որ Նոր - Ջուղայից հայրենի գիւղը վերադարձող ուսանողները - Պ. Պ. Կարապետ Մանսուրեան և Վարդան Անդրէասեան-գործի գլուխ անցնելով տեղական ոյժերից կազմակերպում են մի փոքրիկ խումբ և ներկայացնում մի քանի պիեսներ, որոնց մէջ եղած կանացի դերերը կատարում են տղամարդիկ, որովհետեւ գիւղական աղէկները չեն համարձակուում բեմ դուրս գալ: Դրանից յետոյ թատրոնական գործը շարունակում են նորից դպրոցական ուսուցիչ-ուսիները, — օր. Խաչիսթեան և Պ. Գապար Տէր - Բարսեղեանները, — որոնք դպրոցական հանդէսների առթիւով տալիս են մի քանի ներկայացումներ: Այնուհետեւ փակուում է ուսումնարանը, լռում է և թատրոնը: Բնական է, որ այսպիսի պայմանների մէջ թատրոնը չի կարող կրթիչ նշանակութիւն ունենալ և ոչ էլ կարող է ժողովրդի գեղարեստական ճաշակը զարգացնել: Միւս գիւղերում գիւղացիները բոլորովին գուրկ են մնացել ներկայացումներից, և նրանք չգիտեն, թէ ինչ տակ է թատրոնական ներկայացումը:

Ինչպէս տեսնում ենք՝ թատրոնական գործը շատ անմիջեմաբ դրութեան մէջ է գտնուում Չահարմահայում: Այդ տխուր երևոյթը պիտի բացատրել նրանով որ գաւառում չկան ինտելիգենտ անձնաւորութիւններ, գիտակցող անհատներ. իսկ ուր բացակայում են այդ ոյժերը՝ այնտեղ անհնարին է ունենալ բեմ և թատրոնական գործ:

Գալով երաժշտութեան և երգեցողութեան՝ չէ զարգացած գիւղացիների մէջ. պատճառը ժողովրդի ունեանական անմիջեմաբ դրութիւնն է, իսկ երաժշտական գործիքներից գոյութիւն ունեն միայն սազն ու դաբը և աշուղական չնգուրը, որոնք գործածուում են հարսանիքների ժամանակ:

Դ.

Բնակարանը և իր պարագաները. — Կազմութիւն և չէնք. — Օշաք. — Տուն. — Կահ-կարասիներ, և այլն:

Չահարմահայ գաւառի հայաբնակ գիւղերը մեծամասնութեամբ շրջապատւած են երկար ու ձիգ քառակկիւնի բարձր պատերով կամ պարիսպներով, որոնք ունեն մի կամ մի քանի դարպասներ, որոնցից ներս մտնելով՝ ձեր աջքերի առաջ պատկերաւում են ծուռ ու մուռ, կեղտոտ փողոցները և կողք-կողքի շինւած տները, որոնց շինում են իրենք տանուտէրերը, տան անդամներին, մի քանի վարպետների աշակցութեամբ, երբ գարնան վարուցանքը վերջացնում են կամ աշխատ կալն աւարտում:

Այդ տները թէ՛ արտաքուստ և թէ՛ ներքուստ շատ անպեղծ են. կանոնաւոր սենեակներից բաղկացած, ճաշակով կահաւորուած և, որ գլխաւորն է, առողջապահական պայմանների համաձայն շինուած բնակարաններ գրեթէ չկան: Փայտի սակաւութեան պատճառով տները շինում են յարող շաղախուած ցեխից, որոնք դիմաւում են մտաւորապէս 1-200 տարի: Ընդհանրապէս գիւղական բոլոր տների կտուրները միմեանց կից են (երբեմն միայն ընդհատուում է), այնպէս որ ամբողջ թաղը համաբեա մի կտուր է ունենում, և երբ ձմրան ձիւնը ամբողջապէս ծածկում է գետինը՝ գիւղացիներին իրենց երթևեկութիւնը կատարում են տների կտուրների վրայով, իսկ լաւ եղանակներին քշելում են կտուրներում:

Կազմութիւն և շէնք. — Տունը շինում են այսպէս. նախ գետինը մէկ կամ կէս մետր խորութեամբ փորում և ձգում են հիմք, որի վրայ մի մետր բարձրութեամբ շարում են քարերը և ցեխով ամրացնում. յետոյ քարէիլ են կտրում, ցեխ պատրաստում և ցանկացած բարձրութեամբ պատեր կանգնեցնում: Այս նորից յարգախառն ցեխ են պատրաստում և մայրով (ծեփիւով) ծեփում պատերի երեսները: Այնուհետեւ կառուցանում են սենեակները, որոնց վրայ ծածկուած առաստաղները շինում են այսպէս. միմեանցից մի թզաչափ հեռաւորութեամբ ձգում են գերաններ, որոնց վրայ եղէգներ, ձէնձոններ (կտաւաթի ցողունի գլխաւոր) կամ փուշալ են փռում, յետոյ $\frac{1}{4}$ զազաչափ հողով ծածկում և ծեփում են յարգախառն ցեխով: Առաստաղն ամրացնում են պատերի մի կամ երկու կարգ շարուած հաստ սիւների վրայ:

Ընդհանրապէս բնաբարաններն երկարականի են, շատ աղքատները միայն մի յարկանի են շինուում: Տան ցածի յարկում շինում են գոմբ, օխշըրոցը, գառնանոցը, մարազը, աչկուն և էէրքանոցը (փայտանոցը): Իսկ վերեւ յարկում կառուցանում են օդախը (հիւրասենեակը), սուկը (ամենայն սենեակը), որի մէջ են գտնուում փեթալը (այլի ամբարը), քաթան (ցորենի ամբարը) և տան կահ-կարասիները:

Առ հասարակ տները դռներ չունեն (բացառութեամբ մի քանիսի), այլ դրա փոխարէն ամբողջ գիւղն ունի 1-3 դարբասներ: Ներսէք մտնում դարբասից և մի քիչ առաջ քայլում, դէպք տան բակը, որի մի կողմում տափակ և երկար քարերից շինած լամբից (սանցքից) բարձրանում էք վեր և ահա ձեր առաջ բացուում է սրահանման մի բաց տեղ, որի առջևի, սանդուխի կից, մասը կուշուում է դուռ, իսկ միացալ մասը, որ վերեւից ծածկւած է հարթ կտուրով և պահպանուում է մի քանի սիւներով՝ կոշուում է դալան. կան տներ, որ այս բաժինը չունեն: Դուռն ու դալանը տալածուում են օդախի ու տան առաջ և շինուում են նրանց երկարութեամբ և 2-3 արշին լայնութեամբ:

Դալանի մի կողմում գտնուում է թոնիրը, որ գործածուում են ամառ ժամանակ հաց թխելու և կերակուր եփելու համար: Թոնիրը կլոր (զլանաձև) է՝ 2-3 արշին խորութեամբ, որի յատակից դէպի դուռը մի անցք են բանում, որպէս զի օդի հոսանք զաւրով՝ կրակն արծարծէ. այդ անցքը կոշուում է սնդուկ: Երբ վառելիքը կրակ է դառնում՝ սնդուկի բերանը ծածկուում են, որպէս զի կրակը չուտով չմոխրանայ: Տան մի կողմում շինւած է օդախը, իսկ նրա կողքին էլ՝ սուկը:

Օդախ. — Սա ծառայում է իբրև հիւրասենեակ, որի հողաչէն յատակը կահաւորուում են ասիական ձևով. փուռն են գորգեր, կապերտներ, թաղիքներ և նրանց վրայ ձգում ներքնարկներ, իսկ պատերի կից դնում են բարձեր. ներքնարկների վրայ նստում են ծալապատիկ և յնուում բարձրին: Ընդհանրապէս օդախ-

ները երկարաձև են, այսինքն պատերից երկուքը երկայն և և երկուքը՝ կարճ, որոնցից մէկի վրայ բանում են փայտէ դուռը, որ հաստատւած է լինում սեպերի կամ ծխնիների վրայ:

Օդախի երկար պատերի ցածի մասում չինում են «թախաներ»՝ պատրհաններ, որտեղ դնում են տան իրեղնները՝ լամբ, ինքնառն, մոմակալ, դրամարկղ, և այլն. իսկ վերեւ մասում շինում են «թառեր», որտեղ դարսում են շինեղէն և ապակեղէն ամաններ: Երկար պատերից մէկի մէջ բանում են նաև մի այլ մեծ և խորը «թախա», ուր դնում են հիւրերի անկողինները: Օդախի կարճ պատերից մէկի մէջ, դրան երէտ դիմացի պատի վրայ, շինում են բուխարին կամ օջախը, որ ձմեռ ժամանակ ծառայում է վառարանի տեղ: Պատուհաններ ընդհանրապէս չկան, երբեմն լինում են փոքրիկ լուսանցքներ: Օդախի կողքին շինւած է սուկը:

Տուն (ձմեռաց և կահ-կարասիների սենեակ). — Տունը զլխաւոր սենեակն է, որ ձմեռ ժամանակ ծառայում է թէ՛ իբր բնակարան, ընդունարան, ննջասենեակ, սեղանատուն, և թէ՛ իբր մարան և խոհանոց: Սա լինում է կամ քառակուսի և կամ քառանկիւնի, 3-6 արշին բարձրութեամբ, որի առաստաղը ամրացած է պատերի և ցեխից ու քարէջից շինած քառակուսի «ճրոսերի» (սիւնների) վրայ: Ինչպէս օդախները, նոյնպէս էլ տները լուսամուտներ չունեն, այլ դրանց փոխարէն առաստաղի վրայ ունեն մի քանի «յեղդիքներ»՝ ծակեր, որոնցից ներս է թափանցում լույս ու թարմ օդ: Ուշադրութեան արժանի են պատերի մէջ շինւած «քաթաները»՝ ցորենի շտեմարան-ամբարները, որոնց շինում են այսպէս. պատերը կանգնեցնելիս՝ 2-3 արշին երկարութեամբ բաց են թողնում և առջև քարէջով ծածկում, իսկ վերեւ մասը քառորդ արշնաչափ բաց են թողնում, ապա քարէջի երեսը ծեփում են յարգախառն ցեխով: Իւրաքանչիւր տան մէջ կան 5-10 քաթաներ, որոնցից առաջինի մէջ պահուում են ցորեն, երկրորդի մէջ՝ գարի, երրորդի մէջ՝ հաճար, չորրորդի մէջ՝ դավադ, և այլն: Տան մի անկիւնում դրւած է «փեթակը». դա 3-4 արշին բարձրութեամբ և 1¹/₂ արշին լայնութեամբ, ցեխաչէն և քառանկիւնի մի ամբար է, որի վերեւի բաց մասից աճում են ամբողջ տարւայ արի պաշարը, ապա ծածկում են տախտակներով կամ կաւից շինւած «խուփով»: Տան պատերից մէկի մէջ ամրացրած է նաև փայտաչէն հացի դոսաբբ (պահարանը):

1. Դարբասներն ունեն փայտէ կողպէքներ, որոնց փակում են այսպէս. փայտէ բանալին անց են կացնում, կոտրիկները վեր հանում և կողպէքը յետ շարժում. իսկ երբ քանկանում են գոցել, բանալիով կողպէքը յառաջ են մղում, որով կոտրիկները մանում են կողպէքի խողշները և նրա յառաջ կամ յետ շարժելն արդիւում:

Տան կենդանութիւնում կամ անկիւնամասում չիւլած է թոնիրը, ձմեռը հաց թխելու, կերակուր եփելու և տաքանալու համար. թոնրից բարձրացող ծուխը դուրս է գնում առատաստղի մէջ՝ տեղում կամ մի կողքին բացած կլոր կամ քառակուսի ծակից, որին զիւղացիները կոչում են «յերթիք», որ ծխնելոյզի դեր է կատարում: Բարձրացող ծխից առատաստղն ու որմէրն բուրովին սեանում են:

Ձմեռը թոնրի վրայ դնում են քուրսի (փայտէ քառակուսի, կարճ ոտներով սեղան) և երեսին գցում վերմակ ու կապերտ, ապա ոտները կախում են թոնրի մէջ և վերմակը, մինչև կուրծքերը, իրենց վրայ են առնում:

Թոնիրը համարում է տան սրբութիւնը, որովհետև նա կերակրում է, տաքացնում և մաքրում: Երբ մեծ որդին բաժանւում է հօր տանից և նոր տան հիմք է դնում, առաջին կրակը հայրական տնից է բերում, որպէս զի իր տունն էլ հօր տան նման չէն և օրհնւած լինի: Բացի թոնրից՝ տան մի կողմում չիւլած է նաև մի բուխարի:

Կան-կարասիները. — Տան մէջ են գետեղւած գիւղացիների իրերն ու կան-կարասիները: Այսպէս՝ մի անկիւնում դրած է փայտէ «չարչուիք», որի վրայ դասաւորւած են անկողինները, գորգերը, կապերտները, բարձերը, տեղադրերը, և այլն: Մի ուրիշ կողմում, պատերի տակ, իրար կողքի շարւած են կաւէ կնուճները, որոնց մէջ դրւած են պանիր, չորաթան, մեղր, թթւաներ, և այլն: Մի այլ կողմում դրւած են տաշտը, սեղանտախտակը, վարդանան, բաթաթը, ալրի խախալը (մաղը), կշիռքը. իսկ մի քիչ հեռու, սալակների տակ դրւած են կաթ, մածուն, սեր, և այլն: Մի այլ անկիւնում ընկած են շամը, մանգաղը, գերանդին, բահը, բրիւը, և այլն:

Տանը մէջ գտնւած կան-կարասիներն ու իրերը հետեւեալներն են. — դռակ լհէք, բարձ, խալի, կարպետ, քաշէ, սեղան և աթոռ (միայն մի քանի տներն ունեն), տիկ (կաշէ շրտման, որը դնում են փայտից շինած «չարչուի» վրայ), դազան (մսի, կաթի, պանրի, ապուրի, դաւուր, մայի, որի ներքին կողմը անագւած է, իսկ արտաքինը սրով պատած), տաշտ (կաւէ), լէզան (պղնձ, հացի համար խմոր պատրաստելու), մաղ, սեղանտախտակ, վարդանայ (զլանած կաշտ՝ հացի գունդը բանալու համար), բաթաթ (մի մեծ ճիպոտի չուրջ տափակ և ձւածն ձեռով ճիւղտներն են հիւսում և բրդով պատատում, ապա

կարում են հաստ շորի մէջ, որի վրայ գցում են խմորի բաց արած գունդը — «լօը» — և թոնրի պատին կպցնում ու եփում), աղաման, դիկչի (փոքրիկ դազան սոխուած պատրաստելու կամ կաթ տաքացնելու), տապակ, մաղալա կամ շերիփ (պղնձէ, քեաֆը բռնելու համար), քաֆկիր (պղնձէ աման փլաւ անելու կամ քեաֆը քաշելու), դովրի (կերակուր անելու պղնձէ աման), փիւլա (պղնձէ աման մածունի համար), նալբաթի, փլաւքամիչ, մաշիմա, լանգաուի (հախին անելու աման), լազան (կոնի), խուփ, տաշտ (կաթ անելու պղնձէ աման), թաս, սանդ (փորւած քարէ, որի մէջ հաճար կամ սուրճ են ծեծում), էրկանք (աղորիք, ցորեն կամ հաճար աղալու), խնոցի (կաշէ), կարաս, կնուճ, հատ, կաղրիք (կնուճէ, որի մէջ սոսկ են եփում), պտուր, սափոր, մայաման (փոքրիկ կնուճ է), գովդուշ (կաւէ աման, կովի և ոչխարի կաթը կթելու համար), սամալոր (ինքնահեռ), քէթի (շուր տաքացնելու աման), փոշ կամ զուռի (թէյը դաւ տալու աման), չայդան (պղնձէ կաթնալ թէյ եփելու), դանդաման (շաքարաման), գդալ (փայտէ), սինի, մանղալ (կրակաման), մաշա, լամբայ (թիչ է), փիսուս (ձիթէ փոքրիկ ճրագ), քալալիկ (թոնրից մոխիր դուրս հանելու երկաթէ գործիք), բառֆու և թի (ձին սրբելու գործիք), դէյալ, կշեռք, սանդղ, հայելի, սալաք, շահրա, թոռ, ջալա, քեաքաւ (գորգ և կարպետ գործելու), խուրջին, պարկ, սնդուկ, շամփուր, դազմա, ուրագ, չաքուշ (մուրճ), տոց, մկրատ, իլիկ (զուլպայի համար թէյ մանելու գործիք), խանչալ, աղրճախակ, մարթին, և այլն:

Գիշեր ժամանակ տան մէջ վառում են պղնձէ ձիթէ ճրագ, որը գիշերներում թթուքեան մէջ շատ արագ լոյս է տալիս: Իբրև վառելիք գործածում են ձէթ, որը պատրաստում են գիւղացիները կտաւահատից:

Գում. — Տան կամ օդախի ներքեւում գրտնւում է գումը, ուր կենդանիներն աճողով ձմեռը փակւած են լինում: Գումի գետիկը սալալա տակ է և ծածկւած է փրւած ու չորացրած աթորով. իսկ առատաստղը գմբեթաձև է և չիւլած է ցեխից և քարշից:

Ընդհանրապէս գումը երկայնած է շինում, երկու պատը կարճ և երկուքը երկար: Երկար ստորից մէկի երկարութեամբ շինւած է մուտքը, տեղացիների բարբառով՝ «ախորը», որի մէջ անում են անասունների ուտելու կերը: Խրաքանչիւր գում միջոյրմէնով բաժանւած է երեք մասի. առաջին մասում, մտրի վրայ շին-

լած փայտէ «չաղմեղներեց» կապում են ձիերը, ջորիները և էշերը. երկրորդ մասում պահում են կովերն ու եզները, իսկ երրորդ մասում՝ ոչխարները, այծերը ու գառները:

Գոմի մի անկիւնում շինւած է ջրհորը, որի առաջ գտնւում է քարէ մի «հովգ»՝ աւազան, որի մէջ ձմեռը ջուր են լցնում, որ խմեն անասունները: Իսկ մի այլ կողմում, պատի տակ, շինւած է «սաքուն», ուր ձմեռ ժամանակ մնում է անասնապահը: Գոմում է գտնւում «բուն», ուր ապրում են աքաղաղներն ու հաւերը:

Գոմին կից, բակի մի մասում, իրար կողքի շինւած են՝ «օխշըրնոցը» և «գառնանոցը», որոնք ունեն ցած պատեր և մի — մի դռներ, որոնց գիւղացիները կոչում են «չարչուներ»: Ընդհանրապէս գարնան և ամառն «օխշըրնոցում» և «գառնանոցում» են գիշերում անասունները:

Գոմին կից շինւած է նաև «մարագը», ուր պահում են կովերի, ոչխարների, այծերի և գառների կերը՝ հօնջա, դուռա, և այլն: Կայ նաև մի միծ և հասարակ սենեակ՝ «աշկուն», որի մէջ պահում են ձիերի, ջորիների և էշերի կերը:

Վ. ԽԻՆԵԱ

ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ

(Շարունակելի)

1. Գիւղական տան դռների առաջ պատկած են վիթխարի և պերճաշուք զամրոները, որոնք իրիկ դահլաւաններ հսկում և աղբիւրում են օտարական ճանապարհորդների դէպ կամ տանից ներս մտնելը: Եւ երբ մարդ ցանկանում է մի տանից միւսն անցնել, շան յարձակումից զերծ մնալու համար, ստիպւում է զիմեղ գիւղացու օգնութեան:

«New-York Times» լրագրի վերջին կիրակնօրեայ մէկ թիւը հետաքրքրական ծաւալ մը ստացել է: Ան կը պարունակէ 192 շէրերու վրայ 501 սիւներով լուրեր, յօդուածներ և լուսանկարներ և 862 սիւն ծանուցումներ: Լրագրին այս մասնաւոր տպագրութիւնը յառաջ եկած է ստուաւրաթիւ նիւթերուն համար, որոնք անտիպ մնացել էին Նիւ-Եորքի վերջին տպարական գործադուլին պատճառաւ: Սոյն թիւին 565 հազար օրինակ տպագրելի թուղթին ամբողջական կշիռն է 877 տակառաչափ:

ՀՆԱԽՈՍՈՒԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ՀԻՆ ՀԱՅՈՑ ՔՈՎ

ԱՌՏՆԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

(Շար. սես Բագմ. էջ 332)

Գլխաւորապէս ազնուազգի մանկունքն են, որոնք ջիշ անգամ երեւելով հասարակաց գիշերօթիկ դպրոցաց մէջ¹, սովորաբար իրենց դաստիարակութիւնը կ'ընդունին հայրենի յարկին ներքեւ, որ կարող էր լաւագոյն և ընդարձակագոյն զոհացում տալ իրենց բարոյապէս և նիւթապէս: Արդէն Բ գլխով խօսեցանք կրօնաբարոյական մասին վրայ: Ինչ որ կը վերաբերի մարմնական կրթութեան, պիտի տեսնենք գործիս երկրորդ մասին մէջ: Իսկ հոս կը մնայ ճննել առտնին դաստիարակութեան եղանակը, և ասոր հետ ընկերական ու մտաւոր զարգացման բաժինը՝ որ կ'աւանդուէր անոնց:

Ինչպէս զրոյս սկիզբն ալ դիտեցի, ընտանեկան կամ իսկական կրթութեան մանրամասնութեանց նկատմամբ աղքատ է մեր հին պատմութիւնը, և քանի մ'ընդհանուր տեղեկութիւն միայն տուած, որոց մէջ պիտի հանենք ինչ որ կարելի է՝ մեր նիւթին փոքր ի շատէ ընդարձակ ծանօթութեան համար:

1. — Ըսի կանխաւ՝ թէ ազնուական մանկանց անդեան նախնական շրջանին աւարտմամբ՝ դայեակը կը հրաժարէր իւր պաշտօնէն, ու մանուկը կը տանէր կը յանձնէր ծնողացը: Հոս կը սկսէր բուն կրթութիւնը. և դայեկին կը յաջորդէր դաստիարակը, — թարգմանութեանց մէջ կուշուած նաև հելլենաբար մակնավարժ դաստիարակ², — որ զարգացած, իւր պաշտօնին

1. Աստ՝ 98-9, — 2. Պատմ. Աղ. 15,